ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_ _ փետրվարի 2023 թվականի № -Ա

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 42-րդ կետի համաձայն՝ առանց առևտրային հաշվառքի սարքի ջրամատակարարման դեպքում բազմաբնակարան շենքի բնակիչ-բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակը հաշվարկվում է ամսական 30 խմ, իսկ ոչ բազմաբնակարան շենքի բնակիչ-բաժանորդին՝ ամսական 100 խմ,

բ) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2022 թվականի օգոստոսի 8-ին ներկայացված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման 2023 թվականի սակագների սահմանման հայտի ուսումնասիրության շրջանակում իրականացված մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգի շրջանակում Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 8-ի №ԿՍ/34.3-Ղ4-1/3100-2022 գրությամբ Ընկերությունից պահանջված և Ընկերության 2022 թվականի սեպտեմբերի 14-ի №ՄՇ/28753 գրությամբ ներկայացված առանց ջրաչափի բնակիչ-բաժանորդների սպառման ծավալների վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրությունից պարզվել է, որ մի շարք դեպքերում բաժանորդները եղել են առանձնատների բաժանորդներ, որոնց ջրի սպառումն Ընկերությունը հաշվարկել է յուրաքանչյուր ամիս 30 խմ ծավալով՝

Կանոններով սահմանված 100 խմ-ի փոխարեն: Նշվածի առնչությամբ Հանձնաժողովը 2022 թվականի հոկտեմբերի 3-ի №ԳԲ/34.3-Մ2-6/3411-2022 գրությամբ Ընկերությունից պահանջել է ներկայացնել պարզաբանումներ, ինչին ի պատասխան՝ Ընկերությունը 2022 թվականի հոկտեմբերի 14-ի №ՄՇ/32493 գրությամբ հայտնել է, որ այդ բաժանորդների մասով հաշվարկները կատարվել են՝ հիմք ընդունելով նախկին ջրամատակարարների տրամադրած տվյալները, սակայն ցուցակում ընդգրկված հասցեներում առաջնահերթության կարգով առաջիկայում կտեղադրվեն առևտրային հաշվառքի սարքեր,

գ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, Կանոնների 42-րդ կետով սահմանված պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2022 թվականի նոյեմբերի 22-ից հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2022 թվականի նոյեմբերի 22-ի №ԳԲ/34.3-Մ2-2/4083-2022 գրությամբ,

դ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2022 թվականի նոյեմբերի 30-ի №ՄՇ/38244 գրությամբ հայտնել է, որ որոշակի քանակի առանց ջրաչափի առանձնատների բնակիչ-բաժանորդների խմելու ջրի ամսական սպառումը հաշվարկվել է 30 խմ ծավալով՝ հաշվի առնելով նախկին ջրամատակարար ընկերությունների կողմից փոխանցված տվյալները: Ընդ որում, նման բաժանորդները Հայաստանի Հանրապետության մարզերում են, և հիմնականում սոցիալապես անապահով ընտանիքներ են, իսկ հաշվարկի փոփոխությունը լրացուցիչ ֆինանսական բեռ կդառնա նրանց համար: Միաժամանակ, նշել է, որ որոշ բնակավայրերում ջրաչափերի տեղադրման աշխատանքները տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել, քանի որ ջրագծերն անցկացված են ոչ բավարար խորությամբ և ձմռան ամիսներին դրանց սառչելու պատճառով ջրամատակարարման բնականոն ընթացքն անհնար է ապահովել: Հարցի լուծումը լուրջ ֆինանսական ներդրումներ է պահանջում ինչպես պետության, այնպես էլ Ընկերության կողմից: Նույն հարցի վերաբերյալ Ընկերության խնդրանքով Հանձնաժողովում ջրային կոմիտեի մասնակցությամբ կազմակերպվել է քննարկում, որի ընթացքում Ընկերությունն ըստ էության ընդունել է, որ խախտվել է Կանոնների 42-րդ

կետով սահմանված պահանջը, սակայն առաջարկել է կարճել վարույթը և հնարավորություն տալ լուծելու խնդիրը,

ե) իրականացված վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կանոնների 42-րդ կետի պահանջը, այն է՝ առանց առևտրային հաշվառքի սարքի ջրամատակարարում ունեցող թվով 668 ոչ բազմաբնակարան շենքի բնակիչ-բաժանորդներին մատակարարված խմելու ջրի քանակը սահմանված ամսական 100 խմ-ի փոխարեն հաշվարկվել է 30 խմ (ընդհանուր՝ 66800 խմ-ի փոխարեն 20040 խմ), ինչը հանգեցրել է սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման ծավալների և ձևավորվող հասույթի թերի հաշվարկման՝ բացասական ազդեցություն ունենալով սպառողներին մատուցվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների սակագների վրա: Ինչ վերաբերում է Ընկերության հիմնավորումներին, ապա դրանք հիմք չեն խախտման համար պատասխանատվությունից ազատվելու կամ վարչական վարույթը կարճելու համար: Մասնավորապես, Ընկերության առջև դրված չէ բաժանորդների սոցիալական բարեկեցության ապահովման խնդիր, վերջինիս պնդումն առ այն, որ հաշվարկի փոփոխությունը նման բաժանորդների համար լրացուցիչ ֆինանսական բեռ կդառնա, բավարար հիմնավորված չէ, իսկ ջրաչափերի տեղադրման հետ կապված նշված խնդիրները որևէ աղերս չունեն Կանոնների 42-րդ կետով սահմանված հաշվարկի մեխանիզմի կիրառման հետ: Վերոգրյալից ելնելով, Հանձնաժողովի գնահատմամբ, հիշյալ պահանջի խախտման համար Ընկերության նկատմամբ ենթակա է կիրառման տուգանք, և

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 3-րդ կետը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոնների 42-րդ կետի խախտման համար Ընկերությանը տուգանել հինգ միլիոն դրամ գումարի չափով:
2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005001343 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում և բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:
4. Սույն որոշումն սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
փետրվարի 2023թ.